

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

02.07.2018թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին**

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Ղամբարյանը - մարզպետի խորհրդական
- Գ.Սաղաթեյանը - մարզպետի օգնական
- Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական

**Օր ա կ ա ր գ ու մ՝**

1. Լոռու նորանշանակ փոխմարզպետ Սերգեյ Սարուխանյանին մարզպետարանի աշխատակազմին ներկայացնելու մասին  
/Ջեկ. Հ.Մարգարյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին  
/ Ջեկ. Ն.Սարգսյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
/ Ջեկ. Հ.Պապոյան/
4. Քաղաքաշինության վարչությանը տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին  
/ Ջեկ. Ա.Ջանազյան/
5. 2018 թվականի ամառային զորակոչի ընթացքի մասին  
/ Ջեկ. Ս.Ղուբաթյան/
6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին  
/ Ջեկ. Գ.Հակոբյան/
7. Այլ հարցեր

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն սահմանված ձևաչափով և ժամկետներում՝ տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների մոնիտորինգի իրականացման նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի նկատմամբ, ինչպես նաև պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել բերքահավաքի վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ